

«Վավերացնում են»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
14 օգոստոսի 2001 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 օգոստոսի 2001 թվականի N 759
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ԴԵՂԱՏՈՄՍԱՅԻՆ ՁԵՎԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի «ե» կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**։

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում կիրառվող դեղատոմսային ձևաթղթերը (կցվում են)։

2. Սահմանել, որ՝

ա) N 1 դեղատոմսային ձևաթուղթը նախատեսված է թմրադեղերի համար։

N 1 դեղատոմսային ձևաթուղթը տպագրվում է պաշտպանվածության աստիճան ունեցող (ջրային նշաններ) 148 մմ x 210 մմ չափերով (A 5) վարդագույն թղթի վրա։ Դիմերեսի և դարձերեսի տառերը, գծերը սև են։ Ձևաթղթի դիմերեսի վրա տպագրական դաշտը սահմանվում է թղթի եզրերից՝ վերևից և ներքևից 15 մմ, ձախից՝ 30 մմ, աջից՝ 10 մմ։ Դիմերեսի վերևի ձախ անկյունում նշվում են բժշկական կազմակերպության գտնվելու վայրը և հեռախոսահամարը, որոնք հաստատվում են կազմակերպության դրոշմակնիքով։ Դարձերեսի վրա տպագրվում է «Բժշկի հուշաթերթիկ»։ Դարձերեսի տպագրական դաշտն ազատ է։

Ձևաթուղթն ունի սերիա և համարակալում։ Մերիան սկսվում է «Ա» տառով, որից հետո գրվում է համարը։ Ձևաթղթի համարը վեցանիշ թիվ է, համարակալումն սկսվում է աջից ձախ՝ 000001-ից։ Մեկ սերիայում տպագրվում է 999999 դեղատոմսային ձևաթուղթ, որից հետո սերիան փոխվում է՝ «Բ» տառի՝ համարակալումը կրկին սկսելով 000001-ից և այդպես շարունակ՝ ըստ անհրաժեշտության։

բ) N 2 դեղատոմսային ձևաթուղթը նախատեսված է հոգեմետ դեղերի համար։

N 2 դեղատոմսային ձևաթուղթը տպագրվում է 148 մմ x 210 մմ չափերով (A 5) սպիտակ թղթի վրա։ Դիմերեսի և դարձերեսի տառերը, գծերը կապույտ են։ Ձևաթղթի դիմերեսի վրա տպագրական դաշտը սահմանվում է թղթի եզրերից՝ վերևից և ներքևից 15 մմ, ձախից՝ 30 մմ, աջից՝ 10 մմ։ Դիմերեսի վերևի ձախ անկյունում նշվում են բժշկական կազմակերպության գտնվելու վայրը և հեռախոսահամարը, որոնք հաստատվում են կազմակերպության դրոշմակնիքով։ Դարձերեսի վրա տպագրվում է «Բժշկի հուշաթերթիկ»։ Դարձերեսի տպագրական դաշտն ազատ է։

գ) N 3 դեղատոմսային ձևաթուղթը նախատեսված է սովորական դեղերի համար։

N 3 դեղատոմսային ձևաթուղթը տպագրվում է 148 մմ x 210 մմ չափերով (A 5) սպիտակ թղթի վրա։ Դիմերեսի և դարձերեսի տառերը, գծերը սև են։ Ձևաթղթի դիմերեսի վրա տպագրական դաշտը սահմանվում է թղթի եզրերից՝ վերևից և ներքևից 15 մմ, ձախից՝ 20 մմ, աջից՝ 20 մմ։ Դիմերեսի վերևի ձախ անկյունում նշվում են բժշկական կազմակերպության գտնվելու վայրը և

հեռախոսահամարը, որոնք հաստատվում են կազմակերպության դրոշմակնիքով: Դարձերեսի վրա տպագրվում է «Բժշկի հուշաթերթիկ»: Դարձերեսի տպագրական դաշտն ազատ է:

N 3 դեղատոմսային ձևաթուղթը կարող է տպագրվել բժշկական կազմակերպության տարբերանշան ունեցող ձևաթղթի վրա՝ պահպանելով նշված չափերը:

դ) N 4 դեղատոմսային ձևաթուղթը նախատեսված է հոգեմետ դեղերի համար:

N 4 դեղատոմսային ձևաթուղթը տպագրվում է 148 մմ x 210 մմ չափերով (A 5) սպիտակ թղթի վրա: Դիմերեսի և դարձերեսի տառերը, գծերը կապույտ են: Ձևաթղթի դիմերեսի վրա տպագրական դաշտը սահմանվում է թղթի եզրերից՝ վերևից և ներքևից 15 մմ, ձախից՝ 30 մմ, աջից՝ 10 մմ: Դիմերեսի վերևի ձախ անկյունում նշվում են անհատ ձեռնարկատիրոջ (ֆիզիկական անձի) բնակության վայրը և հեռախոսահամարը: Դարձերեսի վրա տպագրվում է «Բժշկի հուշաթերթիկ»: Դարձերեսի տպագրական դաշտն ազատ է:

ե) N 5 դեղատոմսային ձևաթուղթը նախատեսված է սովորական դեղերի համար:

N 5 դեղատոմսային ձևաթուղթը տպագրվում է 148 մմ x 210 մմ չափերով (A 5) սպիտակ թղթի վրա: Դիմերեսի և դարձերեսի տառերը, գծերը սև են: Ձևաթղթի դիմերեսի վրա տպագրական դաշտը սահմանվում է թղթի եզրերից՝ վերևից և ներքևից 15 մմ, ձախից՝ 20 մմ, աջից՝ 20 մմ: Դիմերեսի վերևի ձախ անկյունում նշվում են անհատ ձեռնարկատիրոջ (ֆիզիկական անձի) բնակության վայրը և հեռախոսահամարը: Դարձերեսի վրա տպագրվում է «Բժշկի հուշաթերթիկ»: Դարձերեսի տպագրական դաշտն ազատ է:

N 5 դեղատոմսային ձևաթուղթը կարող է տպագրվել բժշկական կազմակերպության տարբերանշան ունեցող ձևաթղթի վրա՝ պահպանելով նշված չափերը:

3. Սահմանել, որ զեղչով դեղատոմսերն ուժի մեջ են դեղատոմսը դուրս գրող բժշկի ստորագրության առկայության դեպքում: Դրանք պահվում են 5 տարի և ոչնչացվում են հանձնախմբի կողմից:

(պարբերությունն ուժը կորցրել է 02.08.12 N 971-Ն)

(3-րդ կետը լրաց 17.02.11 N 140-Ն, փոփ., խմբ 02.08.12 N 971-Ն)

4. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը՝ մեկամսյա ժամկետում հաստատել Հայաստանի Հանրապետության դեղատոմսերի դուրսգրման և դեղերի բացթողման կարգը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2001 թվականի օգոստոսի 14-ից:

Հայաստանի Հանրապետության վարչապետ

Ա. Մարգարյան

Բժշկական կազմակերպության դրոշմակնիքը

Գտնվելու վայրը _____

Հեռախոսահամարը _____

*Հաստատված է
ՀՀ կառավարության 2001 թվականի
օգոստոսի 14-ի N 759 որոշմամբ*

Դեղատոմսային ձևաթուղթ N 1

Դ Ե Ղ Ա Տ Ո Ս Ս

Թմրադեղի համար

Ա 000001

_____ 200 __ թ.

(դեղատոմսը գրելու ամսաթիվը)

Հիվանդի անունը, ազգանունը (լրիվ)

Բժշկական քարտի (հիվանդության պատմության) համարը _____
Տարիքը ___ բնակության վայրը _____
Հեռախոսահամարը _____
Բժշկի անունը, ազգանունը, հայրանունը (լրիվ) _____

Բժշկի ստորագրությունը

Կ.Տ.

Դեղատոմսն ուժի մեջ է 20 օր:

Դեղատոմսը հատուկ հաշվառման փաստաթուղթ է և պահվում է դեղատանը:

ԲԺՇԿԻ ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ

Դեղատոմսը դուրս է գրվում հայերեն կամ լատիներեն, ընթեռնելի ձեռագրով, հստակ, թանաքով կամ գնդիկավոր գրիչով, ուղղումներ չեն թույլատրվում:

- Մեկ դեղատոմսային ձևաթղթի վրա դուրս է գրվում մեկ դեղ:
- Թույլատրվում է կատարել կրճատումներ՝ միայն սահմանված կանոններով:
- Պինդ և սորուն նյութերը դուրս են գրվում գրամներով (0,5, 1,0), հեղուկները՝ միլիլիտրերով, գրամներով և կաթիլներով:
- Օգտագործման ձևը գրվում է հայերեն կամ միաժամանակ հայերեն և հիվանդին հասկանալի լեզվով: Արգելվում է սահմանափակվել ընդհանուր ցուցումներով՝ «Ներքին», «Հայտնի է» և այլն:
- Ուժի մեջ է դեղատոմսը դուրս գրող բժշկի ստորագրության առկայության դեպքում: Պահվում է 5 տարի և ոչնչացվում է հանձնախմբի կողմից:

Դեղատուն _____ Ամսաթիվը _____
Անհատական պատրաստման դեղատոմս N _____
Ընդունեց _____
Պատրաստեց _____
Ստուգեց _____ Անալիզ N _____
Բաց թողեց _____

(ձևաթուղթը փոփ. 02.08.12 N 971-Ն)

Բժշկական կազմակերպության դրոշմակնիքը
Գտնվելու վայրը _____
Հեռախոսահամարը _____

*Հաստատված է
ՀՀ կառավարության 2001 թվականի
օգոստոսի 14-ի N 759 որոշմամբ*

Դեղատոմսային ձևաթուղթ N 2

Դ Ե Ղ Ա Տ Ո Մ Ս

հոգեմետ դեղի համար
_____ 200__ թ.
(դեղատոմսը դուրս գրելու ամսաթիվը)

Հիվանդի անունը, ազգանունը (լրիվ)

Բժշկական քարտի (հիվանդության պատմության) համարը (եթե կա) _____

Տարիքը ___ բնակության վայրը _____

Հեռախոսահամարը _____

Բժշկի անունը, ազգանունը, հայրանունը (լրիվ)

Բժշկի ստորագրությունը

Կ.Տ.

Դեղատոմսը հատուկ հաշվառման փաստաթուղթ է և պահվում է դեղատանը:

ԲԺՇԿԻ ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ

Դեղատոմսը դուրս է գրվում հայերեն կամ լատիներեն, ընթեռնելի ձևազրույցով, հստակ, թանաքով կամ գնդիկավոր գրիչով, ուղղումներ չեն թույլատրվում:

- Թույլատրվում է կատարել կրճատումներ՝ միայն սահմանված կանոններով:
- Պինդ և սորուն նյութերը դուրս են գրվում գրամներով (0,5, 1,0), հեղուկները՝ միլիլիտրերով, գրամներով և կաթիլներով:
- Օգտագործման ձևը գրվում է հայերեն կամ միաժամանակ հայերեն և հիվանդին հասկանալի լեզվով: Արգելվում է սահմանափակվել ընդհանուր ցուցումներով՝ «Ներքին», «Հայտնի է» և այլն:
- Դեղատոմսն ուժի մեջ է դեղատոմսը դուրս գրող բժշկի ստորագրության առկայության դեպքում: Պահվում է մեկ տարի և ոչնչացվում է հանձնախմբի կողմից:

Դեղատուն _____ Ամսաթիվը _____

Անհատական պատրաստման դեղատոմս N _____

Ընդունեց _____

Պատրաստեց _____

Ստուգեց _____ Անալիզ N _____

Բաց թողեց _____

(ձևաթուղթը փոփ. 02.08.12 N 971-Ն)

Բժշկական կազմակերպության դրոշմակնիքը

Գտնվելու վայրը _____

Հեռախոսահամարը _____

*Հաստատված է
ՀՀ կառավարության 2001 թվականի
օգոստոսի 14-ի N 759 որոշմամբ*

Դեղատոմսային ձևաթուղթ N 3

Դ Ե Ղ Ա Տ Ո Մ Ս

սովորական դեղի համար

_____ 200 ___ թ.

(դեղատոմսը դուրս գրելու ամսաթիվը)

Հիվանդի անունը, ազգանունը (լրիվ)

Տարիքը ___ բնակության վայրը _____

Հեռախոսահամարը _____

Բժշկի անունը, ազգանունը, հայրանունը (լրիվ)

Բժշկի ստորագրությունը

Կ.Տ.

ԲԺՇԿԻ ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ

Դեղատոմսը դուրս է գրվում հայերեն կամ լատիներեն, ընթեռնելի ձեռագրով, հստակ, թանաքով կամ գնդիկավոր գրիչով, ուղղումներ չեն թույլատրվում:

- Թույլատրվում է կատարել կրճատումներ՝ միայն սահմանված կանոններով:
- Պինդ և սորուն նյութերը դուրս են գրվում գրամներով (0,5, 1,0), հեղուկները՝ միլիլիտրերով, գրամներով և կաթիլներով:
- Օգտագործման ձևը գրվում է հայերեն կամ միաժամանակ հայերեն և հիվանդին հասկանալի լեզվով: Արգելվում է սահմանափակվել ընդհանուր ցուցումներով՝ «Ներքին», «Հայտնի է» և այլն:
- **(պարբերությունն ուժը կորցրել է 02.08.12 N 971-Ն)**

Դեղատուն _____ Ամսաթիվը _____

Անհատական պատրաստման դեղատոմս N _____

Ընդունեց _____

Պատրաստեց _____

Ստուգեց _____ Անալիզ N _____

Բաց թողեց _____

(ձևաթուղթը փոփ. 02.08.12 N 971-Ն)

Անհատ ձեռնակատիրոջ
(ֆիզիկական անձի) բնակության վայրը

*Հաստատված է
ՀՀ կառավարության 2001 թվականի
օգոստոսի 14-ի N 759 որոշմամբ*

Հեռախոսահամարը _____

Դեղատոմսային ձևաթուղթ N 4

Դ Ե Ղ Ա Տ Ո Մ Ս

հոգեմետ դեղի համար

_____ 200 __ թ.

(դեղատոմսը դուրս գրելու ամսաթիվը)

Հիվանդի անունը, ազգանունը (լրիվ)

Բժշկական քարտի (հիվանդության պատմության) համարը (եթե կա) _____

Տարիքը ___ բնակության վայրը _____

Հեռախոսահամարը _____

Բժշկի անունը, ազգանունը, հայրանունը (լրիվ) _____

Բժշկի ստորագրությունը _____

Կ.Տ.

Դեղատոմսը հատուկ հաշվառման փաստաթուղթ է և պահվում է դեղատանը:

ԲԺՇԿԻ ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ

Դեղատոմսը դուրս է գրվում հայերեն կամ լատիներեն, ընթեռնելի ձեռագրով, հստակ, թանաքով կամ գնդիկավոր գրիչով, ուղղումներ չեն թույլատրվում:

- Թույլատրվում է կատարել կրճատումներ՝ միայն սահմանված կանոններով:
- Պինդ և սորուն նյութերը դուրս են գրվում գրամներով (0,5, 1,0), հեղուկները՝ միլիլիտրերով, գրամներով և կաթիլներով:
- Օգտագործման ձևը գրվում է հայերեն կամ միաժամանակ հայերեն և հիվանդին հասկանալի լեզվով: Արգելվում է սահմանափակվել ընդհանուր ցուցումներով՝ «Ներքին», «Հայտնի է» և այլն:
- Դեղատոմսն ուժի մեջ է դեղատոմսը դուրս գրող բժշկի ստորագրության առկայության դեպքում: Պահվում է մեկ տարի և ոչնչացվում է հանձնախմբի կողմից:

Դեղատոմս _____ Ամսաթիվը _____

Անհատական պատրաստման դեղատոմս N _____

Ընդունեց _____

Պատրաստեց _____

Ստուգեց _____ Անալիզ N _____

Բաց թողեց _____

(ձևաթուղթը փոփ. 02.08.12 N 971-Ն)

Անհատ ձեռնակատիրոջ
(ֆիզիկական անձի) բնակության վայրը _____

*Հաստատված է
ՀՀ կառավարության 2001 թվականի
օգոստոսի 14-ի N 759 որոշմամբ*

Հեռախոսահամարը _____

Դեղատոմսային ձևաթուղթ N 5

Դ Ե Ղ Ա Տ Ո Մ Ս

սովորական դեղի համար

_____ 200 __ թ.

(դեղատոմսը դուրս գրելու ամսաթիվը)

Հիվանդի անունը, ազգանունը (լրիվ) _____

Տարիքը ___ բնակության վայրը _____

Հեռախոսահամարը _____

Բժշկի անունը, ազգանունը, հայրանունը (լրիվ) _____

ԲԺՇԿԻ ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ

Դեղատոմսը դուրս է գրվում հայերեն կամ լատիներեն, ընթեռնելի ձեռագրով, հստակ, թանաքով կամ գնդիկավոր գրիչով, ուղղումներ չեն թույլատրվում:

- Թույլատրվում է կատարել կրճատումներ՝ միայն սահմանված կանոններով:
- Պինդ և սորուն նյութերը դուրս են գրվում գրամներով (0,5, 1,0), հեղուկները՝ միլիլիտրերով, գրամներով և կաթիլներով:
- Օգտագործման ձևը գրվում է հայերեն կամ միաժամանակ հայերեն և հիվանդին հասկանալի լեզվով: Արգելվում է սահմանափակվել ընդհանուր ցուցումներով՝ «Ներքին», «Հայտնի է» և այլն:

• (պարբերությունն ուժը կորցրել է 02.08.12 N 971-Ն)

Դեղատուն _____ Ամսաթիվը _____

Անհատական պատրաստման դեղատոմս N _____

Ընդունեց _____

Պատրաստեց _____

Ստուգեց _____ Անալիզ N _____

Բաց թողեց _____

(ձևաթուղթը փոփ. 02.08.12 N 971-Ն)